



ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 մայիսի 2019թ.

N 6 -Ս

ք.Ստեփանակերտ

ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով քաղաքացի Վլադիմիր Պոլոսյանի՝ նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 2019 թվականի մայիսի 29-ի դիմումը, Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **պ ա ր զ ե ց**.

Քաղաքացի Վլադիմիր Պոլոսյանը 2019 թվականի մայիսի 29-ին Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել դիմում՝ խնդրելով քաղաքացիական նախաձեռնության կարգով Արցախի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նպատակով գրանցել նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին, ինչպես նաև նախաձեռնող խմբի անդամներին տրամադրել սահմանված ձևի վկայականներ:

Դիմումին կից ներկայացված են՝ նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը՝ հաստատված նոտարական կարգով, նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները և Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով: Դիմումի հետ ներկայացվել է նաև նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն:

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Արցախի Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածն ամրագրում է. «1. Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 6-րդ, 9-րդ և 11-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 87-90-րդ, 92-94-րդ, 96-րդ, 106-րդ հոդվածներում, 107-րդ հոդվածի 1-ին մասում, 108-րդ հոդվածի 1-ին մասում, 109-րդ, 121-րդ, 131-րդ, 132-րդ և 175-րդ հոդվածներում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն

պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Հանրապետության նախագահը կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն տասը տոկոսը:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված գլուխների և հոդվածների՝ Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, Հանրապետության նախագահի կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն հինգ տոկոսի նախաձեռնությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:

3. Հանրաքվեն նշանակվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ: »:

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրում է, որ դիմումին կից Սահմանադրության փոփոխությունների քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծի նկատմամբ կիրառել են Արցախի Հանրապետության Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումները:

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի «Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի գործունեության կարգը, նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշման և քաղաքացիական նախաձեռնության անդամին ու լիազոր ներկայացուցչին տրվող վկայականների ձևերը սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝

«1. Սահմանադրությունն ընդունելու կամ փոփոխելու կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 10 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:

2. Նախաձեռնող խումբը գրանցման համար Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով) է ներկայացնում նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով, նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները, համապատասխան օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, և նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին կամ մերժում է գրանցումը, եթե սույն կարգի 1-ին կետով սահմանված պահանջները պահպանված չեն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախաձեռնող խումբը գրանցելու մասին որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելուց

հետո՝ եռօրյա ժամկետում, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի դիմումի հիման վրա նախաձեռնող խմբի անդամներին տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևի վկայականներ: »:

Դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի (244 թերթ) ուսումնասիրությամբ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրում է, որ քննարկման առարկա դիմումին կից ներկայացված են Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի «Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի գործունեության կարգը, նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի նշանակելու վերաբերյալ որոշման և քաղաքացիական նախաձեռնության անդամին ու լիազոր ներկայացուցչին տրվող վկայականների ձևերը սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ ընդունված կարգով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի «Ստորագրությունների վավերականության հաստատման կարգը սահմանելու մասին» N 4-Ն որոշման համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո՝ 45 օրվա ընթացքում:

Վերոգրյալի հիման վրա Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի գրանցելու վերաբերյալ Վլադիմիր Պողոսյանի դիմումը բավարարել՝ գրանցել քաղաքացիական նախաձեռնության կարգով Արցախի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծ ներկայացրած նախաձեռնող խմբին (բաղկացած 218 անդամներից) և որպես նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի՝ Վլադիմիր Պողոսյանին:

2. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեցող առնվազն 10278 (տասը հազար երկու հարյուր յոթանասունուրթ) քաղաքացիների (համաձայն ԱՀ ոստիկանության N10-7/8205 առ 30.05.2019թ. գրության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը կազմում է 102777) ստորագրությունների հավաքման համար ամրագրված 45-օրյա ժամկետ սահմանել 2019 թվականի հունիսի 4-ից մինչև 2019 թվականի հուլիսի 18-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Ե.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ